




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«18» հուլիսի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 **Հ. Թունյան**

ԳԲԽ-25/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Շիրակ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 03300345) 29.06.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Շիրակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.06.2015թ. ներկայացված բողոքով «Շիրակ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԿԱԻ-ԲԸԾԶԲ-15/6» ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստը կայացել է 15.06.2015թ., որին ներկա էին հանձնաժողովի չորս անդամները: Երեք մասնակիցներից երկուսի հայտերը որակվել են որպես ոչ բավարար,

սակայն անհայտ պատճառներով հայտերի բացման նիստի ընթացքում չեն հայտարարվել առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների անվանումները, այսինքն խախտվել է ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները: Հանձնաժողովը թիվ 3 արձանագրությունում նշել է, որ Ընկերության ներկայացրած հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը, սակայն 19.06.2015թ. կայացված նիստի ընթացքում Ընկերության ներկայացված հայտը չի մերժվել: ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե հանձնաժողովը չի մերժել հայտը, ապա այն համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընկերությունը տեղեկացրել է, որ շահութահարկի մասով ունեցել է 198 711 ՀՀ դրամ պարտք, որը հայտը ներկայացնելու օրվա՝ 15.06.2015թ. դրությամբ չի որակվում որպես ժամկետանց, իսկ ընդհանուր առմամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 6 025 615 ՀՀ դրամ գերավճար, այսինքն, համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ Ընկերության ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը համապատասխանող:

Հանձնաժողովը թիվ 3 արձանագրությունում նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված վարձակալության պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին, սակայն չի մասնավորեցրել, թե որ պահանջներին: Հանձնաժողովն արձանագրել է նաև այն փաստը, որ Ընկերության կողմից վարձակալված տարածքի սանհանգույցները գտնվում են ոչ սանհտարահիգիենիկ պայմաններում: Ընկերությունը նույնպես այցելել է նշված տարածք և կազմել արձանագրություն, որի համաձայն սանհտարահիգիենիկ պայմանների խախտումներ չեն հայտնաբերվել:

Ընկերությունը ներկայացված բողոքում նշել է, որ Պատվիրատուն պահանջել է Ընկերության և «Ս. Դավիթ կրթահամալիր» ՍՊԸ-ի միջև կնքված ոչ բնակելի տարածքի (որը Ընկերությանը տրամադրվել է ենթավարձակալության կարգով) վարձակալության պայմանագիրը և կից համաձայնագիրը, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ այն ներառված էր ներկայացվող փաստաթղթերի կազմում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ «Շիրակ» ՍՊԸ-ն պահանջել է դադարեցնել «ԿԱԻ-ԲԸԾՁԲ-15/6» ծածկագրով բաց ընթացակարգով «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ ծառայությունների» գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունում նշված «Շիրակ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և «Շիրակ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող:

2. «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 03.07.2015թ. թիվ Ա-01/251 գրությամբ «Շիրակ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» համաձայն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հունիսի 22-ին կայացած նիստի որոշմամբ մերժվել է առաջին տեղը զբաղեցրած «Շիրակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից 2015թ. հունիսի 29-ին ներկայացված բողոքը չի - կարող ուղղված լինել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հունիսի 22-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության դեմ, քանի որ նշված հանձնաժողովի որոշումը կայացվել է՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության, «Շիրակ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարության և ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 17.07.2015թ. տեղի ունեցած քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտարարել է, որ Ընկերության կողմից ուսումնական տարածքի ենթավարձակալության պայմանագիրը կնքվել է առանց նոտարական վավերացման, ինչը հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-

րդ հողվածի պահանջների խախտում, իսկ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

3. ԳԲԽ-23/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-25/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի իրականացման նպատակով կազմակերպվել է «ԿԱԻ-ԲԸԾՁԲ-15/6» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շիրակ» ՍՊԸ-ն, «Դայմոնդ Հաուզ» ՓԲԸ-ն և «Հարավ ուսանող» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին 15.06.2015թ. հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.06.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարերի գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.06.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետով որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Շիրակ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Դայմոնդ Հաուզ» ՓԲԸ-ին, իսկ «Հարավ ուսանող» ՍՊԸ-ի հայտը ճանաչել անբավարար և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ Նախարարություն):

4. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ Նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Շիրակ» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հունիսի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Շիրակ» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 198 711 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.06.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացրել՝

- առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Շիրակ» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը (բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին) որակել իրականությանը չհամապատասխանող և «Շիրակ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:

- ընտրված մասնակից հայտարարել «Դայմոնդ Հաուզ» ՓԲԸ-ին:

4. ԳԲԽ-25/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Շիրակ» ՍՊԸ-ի 29.06.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 03.07.2015թ. թիվ Ա-01/251 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ

բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Այսպիսով, «Շիրակ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված այն պնդումը, որ անհայտ պատճառներով 15.06.2015թ. հայտերի բացման նիստի ընթացքում չեն հայտարարվել առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների անվանումները, որի արդյունքում Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթները, անհիմն է, քանի որ 15.06.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Շիրակ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղը՝ «Դայմոնդ Հաուզ» ՓԲԸ-ին՝ պահպանելով Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այսպիսով, «Շիրակ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված պնդումը, որ 19.06.2015թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Շիրակ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից չմերժելու պարագայում հայտը համարվում է իրականությանը համապատասխանող՝ Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, անհիմն է, քանի որ 19.06.2015թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ տեղի չի ունեցել: Գնահատող

հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.06.2015թ., որի ժամանակ որոշվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Շիրակ» ՍՊԸ-ին և Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն: Այսպիսով, 15.06.2015թ. նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովը ընդամենը որոշել է առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին, իսկ Նախարարության կողմից տրամադրված եզրակացության արդյունքում «Շիրակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը 22.06.2015թ. նիստի ժամանակ Ընկերության հայտը մերժել է:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ «Շիրակ» ՍՊԸ-ն 15.06.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) շահութահարկի մասով ունեցել է 198711 ՀՀ դրամի պարտք, որը չի համարվում ժամկետանց, իսկ ընդհանուր առմամբ Ընկերությունը ունեցել է 6025615 ՀՀ դրամի գերավճար, ինչի պարագայում «Շիրակ» ՍՊԸ-ի հայտարարությունը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվում է իրականությանը համապատասխանող, ապա Ընկերության կողմից վերոհիշյալ փաստերը հերքվում են Նախարարության տրամադրած եզրակացությամբ, որի համաձայն Ընկերությունը 15.06.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչի պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, «Շիրակ» ՍՊԸ-ն իրավունք չունի մասնակցելու Ընթացակարգին:

Այսպիսով՝ «Շիրակ» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 15-ի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 198 711 ՀՀ դրամի չափով, ինչի պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի մասնակցելու գնումների ընթացակարգերին:

Գտնում ենք, որ «Շիրակ» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու և դրա հետևանքով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունենալու պայմաններում Ընկերության կողմից բողոքում նշված վարձակալական տարածքի կապակցությամբ արված եզրահանգումները դառնում են առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Շիրակ» ՍՊԸ-ի 29.06.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝

Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝

Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝

Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-25/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Վարդանյան